# Դաս 17. Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Սուրբ Ծնունդ, Սուրբ Սարգիս)

*Հիսուս Քրիստոսը ծնվել է Իսրայելում, որն այդ ժամանակ գտնվում էր Հռոմեական կայսրության տիրապետության տակ: Հռոմի կայսրը հրաման էր արձակել մարդահամար սկսելու վերաբերյալ, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք պետք է գնար իր բնակավայրը գրանցվելու: Այդ պատճառով Քրիստոսի ծնողները՝ Հովսեփը և Մարիամը, եկան Բեթղեհեմ, սակայն գիշերելու տեղ չճարելով՝ տեղավորվեցին քարայրում: Հենց այդ մսուրում էլ ծնվեց Հիսուսը: Նրա ծննդյան վկաները եղան մոտակայքի հովիվները, որոնց նախօրոք տեղեկացրել էին հրեշտակները:*